



**Պետական (Գանձապետական) և ՀՀ ԿԲ կողմից թողարկված  
պարտատոմսերի սպասարկման, ներդրումային ծառայությունների մատուցման  
պայմանագիր**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պետական (Գանձապետական) և ՀՀ ԿԲ կողմից թողարկված  
պարտատոմսերի սպասարկման, ներդրումային ծառայությունների մատուցման.

ք. Երևան

-----20--թ.

“Մելլաթ Բանկ” ՓԲԸ-ն(այսուհետև Դիլեր)` ի դեմս գործադիր տնօրեն Սեյեդ Ղուլամռեզա Մուսավիի մի կողմից, և ----- (այսուհետև Ներդրող) ի դեմս ----- մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1.Պայմանագրի Առարկան**

1. Դիլերը, համաձայն Պետական (Գանձապետական) և ՀՀ ԿԲ կողմից թողարկված պարտատոմսերի (այսուհետև պարտատոմսեր ) տեղաբաշխման, շրջանառության, մարման, սպասարկման կարգերի և սույն պայմանագրի, Ներդրողի համար բացում է դեպո հաշիվ և իրականացնում հաշվի սպասարկում :

2. Դիլերը պարտավորվում է Ներդրողի հանձնարարությամբ, վարձատրությամբ, իր անունից, սակայն Ներդրողի հաշվին մասնակցել պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներին, իրականացնել սույն պայմանագրի անբաժան մաս կազմող Ներդրումային ծառայությունների սպասարկման պայմաններով սահմանված հանձնարարականների իրականացումը:

3. Պարտատոմսերի թողարկման համարը, ծավալը, գինը և այլ պայմանները նշվում են Ներդրողի կողմից ներկայացված համապատասխան Ներդրումային ծառայությունների մատուցման պայմաններով սահմանված հայտում:

4. Ներդրողի համար Դիլերի կողմից ձեռք բերած պարտատոմսերը հանդիսանում են Ներդրողի սեփականությունը:

**2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

**Դիլերը պարտավորվում է.**

2.1 Ներդրողի համար բացել դեպո հաշիվ N-----, որը չի հանդիսանում առևտրային գաղտնիք և պարտադիր պետք է նշվի պարտատոմսերի հետ կատարվող գործարքներում և բոլոր հաշվարկային փաստաթղթերում:

2.2 Ներդրողի գրավոր հայտի հիման վրա, համապատասխան առաջարկի առկայության դեպքում, պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաներում գործարքներ իրականացնել, գանձելով միջնորդավճար, համաձայն սակագների:

2.3 Ներդրողի դեպո հաշվում առկա պարտատոմսերը չօգտագործել այլ նպատակներով:

2.4 Ներդրողի պարտատոմսերով, ըստ Դիլերի պարտավորությունների չկրել պատասխանատվություն:

2.5 Ներդրողի կողմից ներկայացված պարտատոմսերի ձեռք բերման հայտը չբավարարվելու դեպքում, Ներդրողի կողմից դեպոնացված ամբողջ գումարը, մեկ բանկային օրվա ընթացքում փոխանցել Դիլերի մոտ գտնվող Ներդրողի բանկային հաշվին կամ Ներդրողի կողմից ներկայացված վճարման հանձնարարականի հիման վրա մեկ այլ բանկային հաշվին կամ կանխիկ տրամադրել նրան:

2.6 Ներդրողի կողմից ներկայացված հայտը չբավարարվելու դեպքում երկու բանկային օրվա ընթացքում հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային կապի միջոցով Ներդրողի ծանուցել նրա առաջարկած պայմաններով գործարքների կնքմանը խոչընդոտող չնախատեսված հանգամանքների առկայության մասին:



**Պետական (Գանձապետական) և ՀՀ ԿԲ կողմից թողարկված  
պարտատոմսերի սպասարկման, ներդրումային ծառայությունների մատուցման  
պայմանագիր**

2.7 Ներդրողին տրամադրել ամբողջական տեղեկատվություն ,ներդրողի կատարած գործարքների և պարտատոմսերի շուկայում տիրող իրավիճակի վերաբերյալ:

2.8 Ներդրողի հայտերով ձեռք բերված Պարտատոմսերը փոխանցել Ներդրողի դեպո հաշվին մեկ բանկային օրվա ընթացքում:

2.9.Ներդրողների կողմից մինչև ժամը 14:00-ն ներկայացված դեպո հանձնարարականները կատարել նույն աշխատանքային օրը:

2.10 Ներդրողի ամեն կատարված գործարքից հետո նրան տրամադրել դեպո հաշվի քաղվածք և տեղեկանք մեկ բանկային օրվա ընթացքում:

2.11.Ներդրողին ամսեկան կտրվածքով տրամադրել իր դեպո հաշվից քաղվածք յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ:

2.12. Երեք օրվա ընթացքում Ներդրողի ներկայացված դեպո հաշվի քաղվածքի կամ կատարված գործառնությունների մասին տեղեկանքի վերաբերյալ գրավոր առարկություններ չլինելու դեպքում դեպո հաշվի քաղվածքը կամ տեղեկանքը Դիլերի կողմից համարվում է ընդունված, իսկ գործարքը պատշաճորեն կատարված:

2.13.Պարտատոմսերի մարման դեպքում Ներդրողին ապահովել մարված պարտատոմսերի գումարի տրամադրումը փաստացի մարման օրվանից մեկ բանկային օրվա ընթացքում:

### **2.1.Դիլերի իրավունք ունի**

2.1.1 Չնդունել Ներդրողի հայտերը ի կատարում դրանք ժամկետից ուշ ներկայացնելու կամ սխալ ձևակերպելու դեպքում: Կամ եթե ապահովված չէ գործարքի համար անհրաժեշտ գումարը Ներդրողի հաշվում :

2.1.2 Գանձել համապատասխան դրամական միջոցներ “Մելլաթ Բանկ”- ում Ներդրողի թիվ ----- հաշվից:

### **2.2 Ներդրողը պարտավորվում է**

2.2.1 Առաջնային տեղաբաշխման աճուրդին մասնակցելու համար սահմանված ձևի հայտ ներկայացնել Դիլերին ոչ ուշ , քան աճուրդից 1 օր առաջ:

2.2.2 Հայտի ներկայացման օրը ապահովել Մելլաթ Բանկում Ներդրողի հաշվին համապատասխան դրամական միջոցների առկայությունը:

2.2.3 Ներդրողի կողմից պարտատոմսերը երկրորդային շուկայում վաճառելու կամ գնելու դեպքում Դիլերին ներկայացնել առք ու վաճառքի պայմանագրի մեկ օրինակ:

2.2.4 Երկրորդային շուկայում պարտատոմսերով գործարքներ իրականացնելիս, դեպո հանձնարարականներ ներկայացնել բանկ մինչև ժամը 14:00:

2.2.5 Զննել Դիլերի կողմից տրված քաղվածքները և դրանցում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Դիլերին:

2.2.6 Դիլերին վճարել միջնորդավճար միջնորդային գործարքների համար՝ համաձայն սահմանված սակագների:

### **2.3 Ներդրողը իրավունք ունի**

2.3.1 Ներկայացնել Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացակարգով նախատեսված պարտատոմսերի համապատասխան գնման, վաճառքի հայտեր կամ հանձնարարականներ:

2.3.2 Առաջնային շուկայից պարտատոմսերի գնման հայտում ներկայացնել համապատասխան առաջարկություններ Ներդրումային ծառայությունների մատուցման պայմաններով սահմանված ձևով:

2.3.3 Պահանջել համապատասխան քաղվածք իր հաշվից՝ կատարված գործարքների վերաբերյալ:



**Պետական (Գանձապետական) և ՀՀ ԿԲ կողմից թողարկված  
պարտատոմսերի սպասարկման, ներդրումային ծառայությունների մատուցման  
պայմանագիր**

2.3.4 Առանց առք ու վաճառքի գործարքի իրականացման մեկ Ենթաավանդատան իր դեպո հաշվից Պարտատոմսերը փոխանցել այլ Ենթաավանդատան իր դեպո հաշվին, ներկայացնելով համապատասխան դեպո հանձնարարական:

2.3.5 ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից կազմակերպվող աճուրդներում ներկայացնել մրցակցային հայտեր:

**3. Վեճերի լուծման կարգը.**

3.1 Վեճերի լուծումը ներկա պայմանագրով կատարվում է կամ բանակցությունների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով :

3.2 Ներկա պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ լրիվ կատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում համաձայն գործող օրենսդրության և սույն պայմանագրի :

**4. Այլ պայմաններ**

4.1 Ներդրողի հետ կապի իրականացման, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ ներդրողի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման միջոց, կանոնակարգվում է կապի միջոցների օգտագործմամբ հաղորդագրությունների փոխանակման ընթացակարգով:

4.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և ուժի մեջ է կողմերից մեկի նախաձեռնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր դրույթների պահանջով այն դադարեցնելը : Կողմերը պարտավոր են նախապես 10 օր առաջ տեղյակ պահել հակառակ կողմին սույն պայմանագիրը դադարեցնելու մասին:

4.3 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում միայն կողմերի միջև կնքված լինելու դեպքում:

4.4 Կողմերն ազատվում են սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից ֆորս - մաժորային հանգամանքների առաջացման դեպքում :

4.5 Սույն պայմանագիրը կազմված է երկու իրավահավասար օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

**5. Կողմերի իրավաբանական հասցեները.**

**Դիլեր՝**

**Ներդրող՝**

“Մեյլաթ Բանկ” Փ.Բ.Ը

ք. Երևան, Թումանյան 5ա, 45 տարածք

Տնօրեն՝

-----  
-----  
-----

Կ.Տ.

Կ.Տ.